«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

25 փետրվարի, 2026 թ. N 9 - Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 85-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.17.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 85-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. 2023 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց համար 2023-26թթ. ընթացքում Պալատի որակավորման քննությունների մասնակցությունը, որակավորման քննություններից ազատումը և բողոքարկումը, Պալատի շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումների, «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով դասընթացի մասնակցությունը իրականացնել անհատույց»:

2. «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 85-Ա որոշումը լրացնել 1.1. կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«1.1 2023 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց համար 2026թ. ընթացքում Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի

որակավորման յուրաքանչյուր դասընթացի մասնակցության վճարը սահմանել 27 000 ՀՀ դրամ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից և տարածվում է 2023 թվականի սեպտեմբերին Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված ու սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Պալատին դիմած անձանց հետ ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**